
HOMO RES SACRA

Հայ-Ռուսական համալսարան

Լ Ր Ա Բ Ե Ր

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՍԵՐԻԱ՝

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(36)

ՀՌՀ Հրատարակչություն

№ 3/2020

Российско-Армянский университет

Печатается по решению
Ученого Совета РАУ

Вестник РАУ

(серия: гуманитарные и общественные науки)

(36)

Издательство РАУ

N 3/2020

Журнал входит в перечень периодических изданий, зарегистрированных ВАК РА и РИНЦ

Российско-Армянский университет, 2020г.

ISSN 1829-0450

УДК 159.9 + 330.16

Поступила: 04.11.2020г.
Сдана на рецензию: 05.11.2020г.
Подписана к печати: 19.01.2021г.

ԱՊՐԱՆՔԱԳՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ ԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Կ.Վ. Ոսկանյան

Երևանի պետական համալսարան
voskanyankarlen@gmail.com

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսական վարքին վերաբերող հարցերը վաղուց են դուրս եկել տնտեսագիտական ուսմնասիրությունների շրջանակից և դարձել միջոլորտային հետազոտությունների առարկա: Քիչ չեն այս ուղղությամբ հոգեբանական հետազոտությունները, որոնցով հիմնավորվում է տնտեսական վարքի վրա հոգեբանական գործոնների ազդեցությունը: Մաթեմատիկական մեթոդների գործադրմամբ կառուցվում են անձի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով և սոցիալական գործոններով պայմանավորված տնտեսական վարքի սոցիալ-հոգեբանական տարատեսակ մոդելներ: Հոդվածում դիտարկվում է ծախսերի ֆունկցիայի միջոցով կառուցվող ապրանքագնային տարածության մաթեմատիկական մոդելը և քննարկվում անձի՝ հոգեբանական գործոններով պայմնավորված տնտեսական վարքի հետազոտություններում այդ մոդելի կիրառելիության խնդիրը:

Հիմնաբառեր՝ տնտեսական վարք, արդյունավետության ցուցանիշներ, հոգեբանական գործոններ, մոդելավորում, գծային տարածություն:

Ժամանակակից տնտեսագիտական տեսություններում կիրառական մեծ նշանակություն են ձեռք բերել տնտեսական սուբյեկտների վարքին և նրա մոդելավորմանն առնչվող հետազոտությունները: Տնտեսական վարքը հետազոտության առարկա է դարձել նաև սոցիոլոգների, քաղաքագետների և հոգեբանների համար, ինչը ստիպում է նրանց մշակել մարդու վարքի ընդհանրացված միջգիտակարգային մոդելներ, որոնցից ելնելով հնարավոր կլինի կատարել կանխորոշումներ նաև տնտեսական վարքի հնարավոր դրսևորումների վերաբերյալ: Այս ուղղությամբ իրականացված ուսումնասիրությունները (հեղինակներ՝ Գ. Տարդ, Ջ. Կատոնա, Հ. Բեքկեր, Կ. Բրուներ, Ջ. Էրրոու, Ս. Լինդենբերգ, Ա. Էտցիոնի, Պ. Վայզե, Հ. Սայմոն, Յո. Շումպետեր, Դ. Կահնեման, Ա. Տվերսկի, Մ. Ռաբին, Ա. Կիտով, Օ. Դեյնեկա, Վ. Պոզնյակով, Ա. Կարնիշև, Ա. Վերիգին, Ա. Ժուրավլյով, Մ. Վինակուրով, Գ. Զալևսկի և այլք) փաստում են, որ տնտեսական վարքի՝ մասնավորապես նրա արդյունավետության ցուցանիշների վրա, զգալի ազդեցություն ունեն հոգեբանական գործոնները [1]-[10]: Այդ է պատճառը, որ հոգեբանական գիտություններում ևս լայն թափ են ստացել այնպիսի հետազոտությունները, որոնք նվիրված են անձի տնտեսական վարքի վրա հոգեբանական գործոնների ազդեցության բացահայտմանը և այդ գործոններով պայմանավորված վարքի մոդելների կառուցմանը:

Ի տարբերություն դասական տնտեսագիտության մեջ ընդունված «բացարձակ արդյունավետության» հայեցակարգի՝ ըստ որի տնտեսական վարքի արդյունավետության չափանիշը անձի եսակենտրոնությամբ պայմանավորված և նվազագույն ծախսերով ձեռք բերված շահույթի առավելագույն չափն է, ներկայիս տնտեսագիտական տեսություններում գերիշխում է Հերբերտ Սայմոնի առաջադրած «սահմանափակ արդյունավետության» հայեցակարգը, որի հիմքում տնտեսավարող սուբյեկտների *գործողությունների արդյունավետության* դրույթն է [11], [12]: Սույն հայեցակարգի իրատեսականությունը հիմնավորվում է նաև փորձարարական հոգեբանության ոլորտում իրականացված հետազոտությունների արդյունքներով, որոնք փաստում են, որ շուկայական տնտեսության ռիսկայնության պայմաններում ընտրություն կատարելիս, տնտեսավարող սուբյեկտներն առաջնորդվում են ոչ միայն կոգնիտիվ, այլև աֆեկտիվ դրդապատճառներով, ինչը կարող է հանգեցնել տնտեսական վարքի ոչ արդյունավետ դրսևորումների [13–15]: Մասնավորապես կոգնիտիվ հոգեբանության ոլորտում իրականացված հետազոտությունները (հեղինակներ՝ Ս. Լիխտենշտեյն, Պ. Սլովիկ, Դ. Բուդեսկու, Դ. Կրանց, Ու. Էդվարդս, Բ. Միլլերս, Բ. Կարլսոն և այլք) փաստեցին, որ տնտեսական որոշումների ընդունման գործընթացի վրա վճռորոշ ազդեցություն կարող են ունենալ անձի հոգեֆիզիոլոգիական և սոցիոհոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված գործոնները:

Ինստիտուցիոնալ և էվոլյուցիոն տնտեսագիտական ուղղությունների ներսում ձևավորվել է այն տեսակետը, որ, չնայած եսակենտրոն ուղղվածության՝ տնտեսական սուբյեկտի վարքը միշտ չէ, որ ուղեկցվում է եկամուտների մաքսիմալացմանը միտված արդյունավետ լուծումների որոնմամբ, քանի որ գտնվելով սովորությունների, հույզերի, հասարակական-քաղաքական ինստիտուտների կողմից սահմանված իրավական նորմերի ազդեցության տակ՝ անձը հաճախ չի կարողանում կայացնել բացարձակ արդյունավետ որոշումներ [16], [17]: Պատահական չէ, որ տնտեսագիտության ոլորտում (մասնավորապես տնտեսական սուբյեկտների վարքին առնչվող հարցերում) հոգեբանական հետազոտությունների կարևորության գնահատանքը հանդիսացավ մասնագիտությամբ հոգեբան Դանիել Կահնեմանին 2002 թվականին տնտեսագիտության գծով շնորհված նոբելյան մրցանակը: Ներկայիս տնտեսագետների զգալի մասն ընդունում է, որ տնտեսական վարքը ոչ միայն տնտեսագիտական, այլև հոգեբանական գործոններով պայմանավորված եզրույթ է: Այս համատեքստում իրականացվում են հետազոտություններ, որոնց նպատակն է փորձարարական ճանապարհով բացահայտել անձի տնտեսական վարքում դրսևորվող այն օրինաչափությունները, որոնց հիմքում ընկած են անձնային և էթնոհոգեբանական առանձնահատկությունները: Մաթեմատիկական մեթոդների գործադրմամբ կառուցվում են տնտեսական վարքի սոցիալ-հոգեբանական տարատեսակ մոդելներ:

Տնտեսական վարքը մոդելավորելիս, փորձարարական հոգեբանության մեջ գործածում են $[(x_1, p_1);(x_2, p_2);...;(x_n, p_n)]$ «ռիսկային հեռանկար» և $U(x)=\sum_{i=1}^{n}u(x_i)p_i$՝ «օգտակարության ֆունկցիա» մաթեմատիկական հասկացությունները, որտեղ x_i-երը հեռանկարի ելքերն են, $u(x_i)$-ն i-րդ ելքի օգտակարությունն է, p_i-երը՝ ելքերի հանդես գալու հավանականությունները ($\sum_{i=1}^{n}p_i=1$) [18]: Ցուցաբերելով քանակական և կարգային վերլուծությունների վրա հենված մոտեցումներ՝ օգտակարության ֆունկցիաների միջոցով հաշվարկվում են տնտեսական վարքի արդյունավետության ցուցանիշները: Օգտակարության ֆունկցիայի տակ նկատի են ունենում տնտեսական սուբյեկտի կողմից ֆիքսված ժամանակահատվածում օգտագործվող բարիքների ծավալի և դրանց վրա կատարվող ծախսերի չափի կախվածությունն արտահայտող ֆունկցիաները: Այդ ֆունկցիաներն ունեն $U=f(x_1, x_2,..., x_n)$ անբացահայտ տեսքը, որտեղ U-ն օգտակարության քանակն է, իսկ $x_1, x_2,..., x_n$-երը օգտագործվող բարիքների ծավալներն են: Կարգային վերլուծություններ կատարվում են այն դեպքում, երբ անձը, չկարողանալով տալ իր ընտրանքների օգտակարության քանակական գնահատականը, վարկանիշավորում է դրանք ըստ իր նախապատվությունների: Նախապատվություններով պայմանավորված ընտրանքների գործընթացի հիմքում ընկած է ամերիկացի գիտնականներ Ջ. Նեյմանի և Օ. Մորգենշտերնի աքսիոմների համակարգը [19, էջ

51–52], կամ դրա փոխակերպված տարբերակները (տե՛ս, օրինակ [20, էջ 33–34]): Ելնելով Նեյման-Մորգենշտերնի աքսիոմներից՝ $U(x)$ ֆունկցիայի միջոցով տնտեսագետները մեկնաբանում են ռիսկի պայմաններում «արդյունավետ տնտեսական վարք» եզրույթը՝ հանգեցնելով արդյունավետության ցուցանիշների խնդիրը $U(x)$ ֆունկցիայի մինիմիզացման խնդրին:

Այլ է ընտրանքների և դրանց օգտակարության ցուցանիշների հարցում հոգեբանների մոտեցումը: Հոգեբանները գտնում են, որ որքան էլ անձը՝ առաջնորդվելով իր կայուն պահանջմունքներով և նախասիրություններով դրսևորի իրեն ձեռնտու տնտեսական վարք, նա՝ որպես այս կամ այն սոցիալական խմբի անդամ, հաշվի է նստում նաև սոցիալ-տնտեսական իրավիճակների, սովորույթների և հասարակական նորմերի հետ, համադրում է սեփական վարքը հասարակության այլ անդամների վարքի հետ: Հետևաբար, տնտեսական վարքի արդյունավետության ցուցանիշները հաշվարկելիս պետք է ելնել անձի ոչ միայն տնտեսագիտական, այլ նաև հոգեբանական մոդելից: Սա նշանակում է, որ տնտեսական վարքի մոդելավորման գործընթացի նպատակը պետք է լինի ճշտել, թե որքանո՛վ են հասարակության ներսում գործող բարոյահրավական նորմերը, անձի անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկություններն ազդում նրա տնտեսական վարքի վրա, որո՛նք են տնտեսական հարաբերությունների ներսում գործող հոգեբանական այն օրինաչափությունները, որ կարող են դոմինանտ ազդեցություն ունենալ նրա վարքի վրա:

«Սահմանափակ արդյունավետության» հայեցակարգը ենթադրում է, որ որքան էլ մարդը ձգտի արդյունավետ գործել, միևնույն է, նրա այդ կարողությունները սահմանափակ են, քանի որ պայմանավորված են մտավոր ընդունակություններով և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության ոչ լրիվությամբ: Եվ քանի որ մարդու վարքը կարող է ուղղորդվել նաև հասարակական-քաղաքական ինստիտուտների զանազան ֆորմալ և ոչ ֆորմալ կանոններով ու նորմերով, ուստի անձնական շահի տեսանկյունից այն կարող է լինել նաև ոչ բացարձակ արդյունավետ: Տնտեսագիտության դասական տեսություններում հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ որքան էլ որոշումներ ընդունելու պահին մարդն առաջնորդվի էգոցենտրիկ նկրտումներով, միևնույն է, որոշման արդյունքը նրա համար միշտ մնում է անորոշ, ինչը ընտրության գործընթացում կարող է դառնալ հոգեբանական գործոն: Դ. Կահնեմանի և Ա. Տվերսկու հետազոտությունները ցույց տվեցին, որ ընտրանքների գործընթացում փորձարկվողների զգալի մասի մոտ Նեյման-Մորգենշտերնի նորմատիվային աքսիոմները չեն գործում և հետևաբար չեն կարող համարվել տնտեսական վարքի արդյունավետության ցուցանիշի հաշվարկման նախադրույթներ: Փորձերի արդյունքում պարզվեց, որ փորձարկվողների մի մասը ռիսկային պայմաններում ընտրություն է կատարում ոչ թե կոգնիտիվ, այլ զգացական դրդապատճառներից ելնելով: Հետևաբար տնտեսական սուբյեկտների վարքը մոդելավորելիս չպետք է ելնել միայն անձի տնտեսագիտական մոդելից, քանի որ տնտեսական վարքի դրսևորման գործընթացում դերակատարություն ունեն նաև անձի զգացմունքայնությունը, իմպուլսիվությունը, չգիտակցված ու չվերահսկվող ներքին մղումները:

Անդրադառնանք ծախսերի ֆունկցիայի միջոցով կառուցվող ապրանքազնային տարածության մաթեմատիկական մոդելին և անձի տնտեսական վարքի արդյունավետության խնդրում այդ մոդելի հնարավոր դրսևորումներին: Այդ նպատակով դիտարկենք վերջավոր n թվով ապրանքատեսակներից բաղկացած $T=\{a_1,a_2,...,a_n\}$ տեսականին, որտեղ a_i-երը ($i=\overrightarrow{1,n}$)[1] տեսականիում առկա ապրանքների անվանումներն են: Դիցուք x^i-ն որևէ սպառողի (անձի) կողմից ֆիքսված t ժամանակահատվածում i-րդ ապրանքատեսակի օգտագործվող քանակությունն է՝ արտահայտված համապատասխան չափման միավորով (հատով, կիլոգրամով, լիտրով և այլն)[2]: $x=\{x^1,x^2,...,x^n\}$ կարգավորված n-յակն անվանենք անձի *պահանջմունքի վեկտոր:* Եթե $y=\{y^1,y^2,...,y^n\}$-ը մեկ այլ պահանջմունքի վեկտոր է, ապա $x=y$ հավասարությունը կնշանակի, որ ցանկացած $i=\overrightarrow{1,n}$ արժեքի դեպքում $x^i=y^i$: Պահանջմուքի վեկտորների բազմությունը նշանակենք A^n: Պահանջմունքնի ցանկացած x և y վեկտորները միմյանց գումարելու և x վեկտորը α իրական թվով բազմապատկելու գործողությունները բնական է սահմանել հետևյալ կերպ.

$$x+y=\{x^1,x^2,...,x^n\}+\{y^1,y^2,...,y^n\}=\{x^1+y^1,x^2+y^1,...,x^n+y^n\}, \qquad (1)$$

[1] $i=\overrightarrow{1,n}$ կարճ գրելաձևը կնշանակի, որ i-ն՝ որպես փոփոխվող ինդեքս, ընդունում է 1-ից մինչև n բոլոր արժեքները:

[2] Որոշ x^i-եր կարող են լինել 0, ինչը կնշանակի, որ սպառողն այդ ապրանքատեսակներից չի օգտագործում:

$$\alpha x = \alpha\{x^1, x^2, ..., x^n\} = \{\alpha x^1, \alpha x^2, ..., \alpha x^n\} :$$

(2)

A^n-ում դիտարկենք $e_1 = \{1,0,0,...,0\}$, $e_2 = \{0,1,0,...,0\}, \ldots,$ $e_n = \{0,0,0,...,1\}$ վեկտորները, որոնց կանվանենք *ապրանքատեսակների միավոր վեկտորներ*[3]: A^n-ի ցանկացած $x = \{x^1, x^2, ..., x^n\}$ վեկտոր միակ ձևով կներկայացվի $e_1, e_2, \ldots, e_n$ վեկտորների գծային զուգակցության միջոցով, քանի որ համաձայն (1) և (2)-ի՝ իրավացի է

$$x = \{x^1, x^2, ..., x^n\} = \{x^1, 0,0,...,0\} + \{0, x^2, 0,...,0\} + \cdots + \{0,0,...0, x^n\} =$$

$$= x^1 \cdot (\{1,0,0,...,0\} + x^2 \cdot \{0,1,0,...,0\} + \cdots + x^n \cdot \{0,0,0,...,1\} = x^1 \cdot e_1 + x^2 \cdot e_2$$

$$+ \cdots + x^n \cdot e_n = \sum_{i=1}^{n} x^i e_i \quad (3)$$

վերլուծությունը: Օգտագործելով (1)-(3) առնչությունները՝ դժվար չէ համոզվել, որ A^n-ը $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքով n-չափի գծային (վեկտորական) տարածություն է [21], [22]: Այսպիսով, սպառողների պահանջմունքների A^n բազմությունը կարելի է դիտարկել որպես տեսականիում առկա ապրանքատեսակների միավոր վեկտորներներից բաղկացած $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքով n-չափի գծային տարածություն, որի ամեն մի $x = x^i e_i$ տարրի x^i կոորդինատները մի որևէ անձի պահանջմունքը բավարարելու համար անհրաժեշտ ապրանքների համապատասխան քանակներն են: Անվանենք այն *պահանջմունքների* կամ *ապրանքների տարածություն:*

A^n գծային տարածությունում դիտարկենք մեկ այլ $\{e_{i'}\}_{\overline{1,n}}$ հենք: Թող այս նոր հենքում $x = x^{i'} e_{i'}$, $e_i = \Gamma_i^{i'} e_{i'}$: Քանի որ $x \in A^n$ վեկտորի համար իրավացի է

$$x^i e_i = x^{i'} e_{i'}, \qquad (4)$$

[3] (1) և (2) ձևով ներմուծված գումարման և թվով բազմապատկման գործողությունների նկատմամբ ապրանքատեսակների միավոր վեկտորների համախումբը (նշանակենք այն $\{e_i\}_{\overline{1,n}}$) գծորեն անկախ է, քանի որ $e_1, e_2, \ldots, e_n$ վեկտորների $\alpha_1 e_1 + \alpha_2 e_2 + \cdots + \alpha_n e_n$ գծային զուգակցությունը 0 է միայն $\alpha_1 = \alpha_2 = \cdots = \alpha_n = 0$ դեպքում:

հավասարությունը, ապա տեղադրելով նրանում e_i վեկտորների արժեքները՝ կստանանք $x^i\Gamma_i^{i'}\vec{e}_{i'} = x^{i'}\vec{e}_{i'}$: Հաշվի առնելով $e_{i'}$ վեկտորների անկախությունը՝ կունենանք

$$x^{i'} = \Gamma_i^{i'} x^i : \qquad (5)$$

Հանգունորեն, եթե (4) հավասարության մեջ տեղադրենք $e_{i'} = \Gamma_{i'}^i e_i$ արժեքները, որոնք $e_{i'}$ վեկտորների ներկայացումներն են $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքում, կստանանք

$$x^i = \Gamma_{i'}^i x^{i'} : \qquad (6)$$

(5) և (6) բանաձևերն արտահայտում են պահանջմունքների A^n տարածության վեկտորի կոորդինատների ձևափոխության օրենքը մի հենքից մյուսին անցնելիս, որտեղ $(\Gamma_i^{i'})$-ն և $(\Gamma_{i'}^i)$-ը չվերասերվող փոխհակադարձ մատրիցներ են[4]:

Դիցուք պահանջմունքի $x = \{x^1, x^2, ..., x^n\}$ վեկտորն ունեցող սպառողը[5] տեսականու a_1 ապրանքատեսակի մեկ միավորի համար վճարում է λ_1 դրամ, a_2-ի մեկ միավորի համար λ_2 դրամ, և վերջապես՝ a_n-ի մեկ միավորի համար λ_n դրամ: $\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\}$ n-յակն անվանենք x սպառողի *գնային վեկտոր:* Այդ դեպքում նրա ծախսը (նշանակենք այն $f(x)$) կհաշվարկվի

$$f(x) = x^1\lambda_1 + x^2\lambda_2 + \cdots + x^n\lambda_n = \sum_{i=1}^{n} x^i\lambda_i = x^i\lambda_i,^* \qquad (7)$$

բանաձևով: Ակնհայտ է, որ $f(x)$ ֆունկցիայի թվային արժեքը պայմանավորվում է $\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\}$ գնային վեկտորով, որը բոլոր սպառողների

[4] Այդ մատրիցներն անվանում են գծային տարածության մի հենքից մեկ այլ հենքի անցման մատրիցներ: Նրանց համար իրավացի են $\Gamma_{k'}^i \Gamma_j^{k'} = \delta_j^i$ և $\Gamma_{j'}^k \Gamma_k^{i'} = \delta_{j'}^{i'}$ նույնությունները:

[5] Այսուհետ « $x = \{x^1, x^2, ..., x^n\}$ պահանջմունքի վեկտոր ունեցող սպառող» արտահայտությանը զուգահեռ կօգտագործենք նաև « x սպառող» և « x պահանջմունք» արտահայտությունները:

* Օգտվելով թենզորական հաշվում ընդունված նշանակումներից՝ եթե գումարի նշանի տակ գտնվող արտադրյալ պարունակող արտահայտության մեջ գումարման ինդեքսը հանդես գա միաժամանակ և՛ ներքևում, և՛ վերևում, ապա ըստ այդ ինդեքսի իրականացվող գումարման $\sum$ նշանը բաց կթողնենք:

համար կարող է լինել ինչպես նույնը՝ այնպես էլ տարբեր[6]: (7) բանաձևով որոշվող $f : A^n \to R$ արտապատկերումով սահմանվում է վեկտորական արգումենտից սկալյար ֆունկցիա, որի թվային արժեքը ցույց է տալիս x պահանջմունքն ունեցող անձի ծախսերի չափը $\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\}$ գնային վեկտորի դեպքում: Անվանենք այն x սպառողի *ծախսերի ֆունկցիա:* f ֆունկցիան գծային ձև է [23], քանի որ $x = \{x^1, x^2, ..., x^n\}$ և $y = \{y^1, y^2, ..., y^n\}$ պահանջմունքի վեկտորների և α իրական թվի համար իրավացի են

$$f(x + y) = (x^i + y^i)\lambda_i = x^i\lambda_i + y^i\lambda_i = f(x) + f(y), \tag{8}$$

$$f(\alpha x) = (\alpha x^i)\lambda_i = \alpha(x^i\lambda_i) = \alpha f(x): \tag{9}$$

առնչությունները[7]: Այսինքն՝ պահանջմունքների A^n տարածության տրված $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքի դեպքում, ամեն մի $\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\}$ գնային վեկտորի՝ (7) բանաձևով միարժեքորեն համապատասխանում է f գծային ձև (ծախսերի ֆունկցիա):

Դիտարկենք միևնույն x սպառողի $f_1(x)$ և $f_2(x)$ ծախսերի ֆունկցիաները՝ որոշված $\lambda^1 = \{\lambda_1^1, \lambda_2^1, \ldots, \lambda_n^1\}$ և $\lambda^2 = \{\lambda_1^2, \lambda_2^2, \ldots, \lambda_n^2\}$ գնային վեկտորներով: Ըստ (4)-ի

$$f_1(x) = x^1\lambda_1^1 + x^2\lambda_2^1 + \cdots + x^n\lambda_n^1 = x^i\lambda_i^1,$$

$$f_2(x) = x^1\lambda_1^2 + x^2\lambda_2^2 + \cdots + x^n\lambda_n^2 = x^i\lambda_i^2,$$

հետևաբար

$$f_1(x) + f_2(x) = x^i\lambda_i^1 + x^i\lambda_i^2 = x^i(\lambda_i^1 + \lambda_i^2), \tag{10}$$

[6] Ակնհայտ է, որ λ գնային վեկտորը բոլոր սպառողների համար նույնը կլինի այն դեպքում, երբ նրանք առևտուր անեն միևնույն վաճառակետից: Տարբեր վաճառակետերից առևտուր անելու դեպքում λ գնային վեկտորը տարբեր սպառողների համար կարող են լինել տարբեր, քանի որ միևնույն ապրանքը տարբեր վաճառակետերում տարբեր գին կարող է ունենալ:

[7] Նկատենք, որ (8) և (9) արտահայտություններում թե՛ x և թե՛ y սպառողների համար գնային վեկտորը նույնն λ -ն է:

$$\alpha f_1(x) = \alpha(x^i \lambda_i^1) = x^i(\alpha\lambda_i^1),\ \alpha \in R, \tag{11}$$

ինչը նշանակում է, որ ծախսերի ֆունկցիաների բազմության մեջ բնական ձևով ներմուծվում են f_1 և f_2 ֆունկցիաների $(f_1 + f_2)$ գումար և α իրական թվի ու f_1 ֆունկցիայի $(\alpha \cdot f_1)$ արտադրյալ ֆունկցիաները՝ որոշված համապատասխանաբար $\lambda^1 + \lambda^2 = \{\lambda_1^1 + \lambda_1^2, \lambda_2^1 + \lambda_2^2, ..., \lambda_n^1 + \lambda_n^2\}$ և $(\alpha \cdot \lambda^1) = \{\alpha\lambda_1^1, \alpha\lambda_2^1, ..., \alpha\lambda_n^1\}$ գնային վեկտորներով: Այսինքն՝ ծախսերի ֆունկցիաների բազմության մեջ

$$f_1(x) + f_2(x) = (f_1 + f_2)(x) \quad (12) \qquad \text{և} \qquad (\alpha \cdot f_1)(x) = \alpha f_1(x) \tag{13}$$

կանոններով սահմանվում են գումարման և թվով բազմապատկման գործողություններ, ընդ որում՝ $(f_1 + f_2)(x)$ և $(\alpha \cdot f_1)(x)$ ֆունկցիաները ևս գծային են, քանի որ

$$(f_1 + f_2)(x + y) = (x^i + y^i)(\lambda_i^1 + \lambda_i^2) =$$
$$= x^i(\lambda_i^1 + \lambda_i^2) + y^i(\lambda_i^1 + \lambda_i^2) = (f_1 + f_2)(x) + (f_1 + f_2)(y),$$

$$(\alpha \cdot f_1)(x + y) = (x^i + y^i)(\alpha\lambda_i^1) = x^i(\alpha\lambda_i^1) + y^i(\alpha\lambda_i^1) = (\alpha f_1)(x) + (\alpha f_1)(y):$$

Հետևաբար, A^n-ի վրա որոշված ծախսերի ֆունկցիաների բազմությունը (12) և (13) բանաձևերով սահմանված գումարման և թվով բազմապատկման գործողությունների նկատմամբ վեկտորական տարածություն է կազմում: Նշանակենք այն $\widetilde{A}^n$:

Օգտվելով f ֆունկցիայի գծայնությունից՝ կարող ենք գրել, որ A^n-ի կամայական x տարրի դեպքում

$$f(x) = f(x^i\vec{e}_i) = f\left(x^1 e_1 + x^2 e_2 + \cdots + x^n e_n\right) = x^1 f(e_1) + x^2 f(e_2) + \cdots +$$
$$x^n f(e_n) = x^i f(e_i): \tag{14}$$

$e_i = \{0,...,0,1,0,...,0\}$ պահանջմունքի վեկտորի համար[8] (7) ներկայացումից կունենանք

$$f(e_i) = 0 \cdot \lambda_1 + 0 \cdot \lambda_2 + \cdots + 0 \cdot \lambda_{i-1} + 1 \cdot \lambda_i + 0 \cdot \lambda_{i+1} + \cdots + 0 \cdot \lambda_n = \lambda_i, (i = \overrightarrow{1,n}), \tag{15}$$

[8] e_i-ն այն պահանջմունքն է, որի i-րդ կոորդինատը 1 է, իսկ մնացածները՝ 0:

այսինքն՝ $f(e_i)$-ն i-րդ ապրանքատեսակի մեկ միավորի գինն է: Համաձայն f ֆունկցիայի սահմանման, $f(e_i)$-ն նաև i-րդ ապրանքատեսակի մեկ միավորի վրա կատրվող ծախսն էր: $f(e_i)$-ի այս երկու իմաստների նույնացումը շատ բնական է, քանի որ տնտեսագիտական տեսանկյունից ևս ապրանքի մեկ միավոր ձեռք բերելու ծախսը հավասար է այդ ապրանքի մեկ միավորի գնին: Ելնելով (15)-ից՝ $\lambda = (\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n)$ գնային վեկտորը կարելի է գրառել նաև $\lambda = (f(e_1), f(e_2), ..., f(e_n))$ տեսքով:

$\widetilde{A}^n$ -ում դիտարկենք

$$f^i(e_j) = \delta^i_j = \begin{cases} 1, & i = j \\ 0, & i \neq j \end{cases}, \ (i, j = \overrightarrow{1, n}) \qquad (16)$$

բանաձևով որոշվող f^i գծային ձևերը: Ցույց տանք, որ $f^1, f^2, \ldots, f^n$ գծային ձևերը $\widetilde{A}^n$ տարածության հենք են կազմում: Իրոք՝ (16) արտահայտությունից ունենք

$$f^1(e_1) = 1,\ f^1(e_2) = 0,\ f^1(e_3) = 0, \ldots,\ f^1(e_n) = 0,$$

$$f^2(e_1) = 0,\ f^2(e_2) = 1,\ f^2(e_3) = 0, \ldots,\ f^2(e_n) = 0, \qquad (17)$$

. . . .

$$f^n(e_1) = 0,\ f^n(e_2) = 0, \ldots,\ f^n(e_{n-1}) = 0,\ f^n(e_n) = 1:$$

f^i -երի գծայնությունից, $\forall x \in A^n$ պահանջմունքի վեկտորի դեպքում կունենանք

$$f^i(x) = f^i(x^j e_j) = x^j f^i(e_j) = x^j \delta^i_j = x^i, \quad (i = \overrightarrow{1, n}) \qquad (18)$$

ինչը նշանակում է, որ f^i -ն ամեն մի $x = x^j e_j$ պահանջմունքի վեկտորի համապատասխանեցնում է այդ իսկ վեկտորի i-րդ կոորդինատը (որը նաև x պահանջմունքի վեկտորն ունեցող սպառողի կողմից a_i ապրանքի օգտագործվող քանակությունն էր): Այսպիսով, (7)-ից և (18)-ից հետևում է, որ ծախսերի ամեն մի f ֆունկցիա՝ որպես գծային ձև, այնպիսի f^i ֆունկցիաների գծային զուգակցություն է, որոնցից յուրաքանչյուրը x պահանջմունքի վեկտորին համապատասխանեցնում է նրա i-րդ կորդինատը: Քանի որ n այդպիսի ֆունկցիաները գծորեն անկախ են, ապա f^i ֆունկցիաների համակարգը կարելի է համարել $\widetilde{A}^n$ վեկտորական տարածության հենք: (17)-ից հետևում է նաև, որ f^1 գծային ձևը որոշվում է $\{1,0,0,...,0\}$ զնային վեկտորով, f^2-ը՝ $\{0,1,0,...,0\}$ զնային վեկտորով, f^n-ը՝ $\{0,0,0,...,1\}$ զնային վեկտորով, որոնք՝ գծորեն անկախ են: Սա ևս հիմնավորում է, որ (16) բանաձևով որոշվող $f^1, f^2, \ldots, f^n$ գծային ձևերը՝ որպես $\widetilde{A}^n$ տարածության տարրեր, գծորեն անկախ են, հետևաբար դրանք կարելի է դիտարկել որպես $\widetilde{A}^n$ գծային տարածության հենքային վեկտորներ: $f^1, f^2, \ldots, f^n$ հենքային վեկտորների համակարգը նշանակենք $\left\{f^i\right\}_{\overline{1,n}}$: (7) և (18)-ից հետևում է նաև, որ

$$f(x) = \lambda_1 f^1(x) + \lambda_2 f^2(x) + \cdots + \lambda_n f^n(x) = \lambda_i f^i(x): \tag{19}$$

Հաշվի առնելով (17)-ը, λ-ն կարելի է ներկայացնել $\widetilde{A}^n$ տարածության f^i հենքային վեկտորների միջոցով հետևյալ կերպ.

$$\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\} = \{\lambda_1, 0, ..., 0\} + \cdots + \{0, ..., 0, \lambda_n\} = \lambda_1\{1,0,...,0\} + \cdots + \lambda_n\{0,0,...,1\} =$$
$$= \lambda_1\{f^1(\vec{e}_1), f^1(\vec{e}_2), ..., f^1(\vec{e}_n)\} + \cdots + \lambda_n\{f^n(\vec{e}_1), f^n(\vec{e}_2), ..., f^n(\vec{e}_n)\} = \lambda_i f^i,$$

որտեղ

$$f^i = \{f^i(\vec{e}_1), f^i(\vec{e}_2), ..., f^i(\vec{e}_{i-1}), f^i(\vec{e}_i), f^i(\vec{e}_{i+1}), ..., f^i(\vec{e}_n)\} =$$
$$\{0,0,...,0,1,0,...,0\}, \quad (i = \overrightarrow{1,n}):$$

Այսպիսով, տրված $\lambda = \{\lambda_1, \lambda_2, \ldots, \lambda_n\}$ զնային վեկտորով որոշվող ամեն մի $f(x)$ ծախսերի ֆունկցիա, միակ ձևով կարելի է ներկայացնել $f^1, f^2, \ldots, f^n$ գծորեն անկախ վեկտորների գծային զուգակցությամբ, հետևաբար $\left\{f^i\right\}_{\overline{1,n}}$ համակարգը $\widetilde{A}^n$ տարածության հենք է: Անվանենք այն A^n տարածության $\left\{\vec{e}_i\right\}_{\overline{1,n}}$ հենքի *փոխադարձ հենք:* Քանի որ A^n-ի տրված $\left\{e_i\right\}_{\overline{1,n}}$ հենքի դեպքում յուրաքանչյուր $f(x)$ ծախսերի ֆունկցիա՝ որպես գծային ձև, միարժեքորեն որոշվում է թվերի $\{f(e_1), f(e_2), ..., f(e_n)\}$ n-յակով (զնային վեկտորով), ապա ակնհայտ է, որ $\widetilde{A}^n$ և A^n տարածությունները իզոմորֆ են: Հետևաբար $\dim \widetilde{A}^n = \ = \dim A^n = n$: $\widetilde{A}^n$-ը, որը A^n տարածության համալուծ տարածությունն է [21], անվանենք *ծախսերի տարածություն:* Այնքանով որ $\widetilde{A}^n$ տարածության տարրերը (ծախսերը) միարժեքորեն պայմանավորվում են λ գնային վեկտորով, $\widetilde{A}^n$ տարածությունը կանվանենք նաև *գնային տարածություն:*

Ամփոփելով ասվածը, կարելի է ձևակերպել հետևյալ արդյունքը: Եթե $\{e_i\}_{\overline{1,n}}$-ը պահանջմունքների A^n տարածության հենք է, իսկ $\{f^i\}_{\overline{1,n}}$-ն նրա փոխադարձ հենքն է նրան համալուծ $\widetilde{A}^n$ գնային տարածությունում, ապա ծախսերի ֆունկցիայի հաշվարկման (7) բանաձևում ապրանքատեսակների $x^1, x^2, ..., x^n$ քանակները, որոնք պահանջմունքի $x \in A^n$ վեկտորի կոորդինատներն են $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքում, միաժամանակ $x \in A^n$ վեկտորի վրա $\widetilde{A}^n$ տարածության f^1, $f^2, \dots, f^n$ հենքային գծային ձևերի արժեքներն են: Գնային վեկտորի λ_i կոորդինատները $f(x) \in \widetilde{A}^n$ վեկտորի կոորդինատներն են $\{f^i\}_{\overline{1,n}}$ հենքում, ինչպես նաև f ֆունկցիայի $f(e_1)$, $f(e_2), \dots, f(e_n)$ արժեքներն են A^n-ի $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքային վեկտորների վրա: Իրավացի են հետևյալ առնչությունները.

$$x = x^i \vec{e}_i, \quad f^i(\vec{x}) = x^i, \quad f(x) = \lambda_i f^i(x), \quad f(e_i) = \lambda_i,$$

$$x = \{x^1, x^2, ..., x^n\} = \{f^1(x), f^2(x), ..., f^n(x)\},$$

$$\lambda = \{\lambda_1, \lambda_2, ..., \lambda_n\} = \{f(e_1), f(e_2), ..., f(e_n)\} \quad (*)$$

$$f(x) = x^i f(e_i), \quad f(x) = f(e_i) f^i(x), \quad \lambda = \lambda_i f^i:$$

(14) արտահայտությունից հետևում է, որ $f(e_i)$ հաստատունները (գնային վեկտորի կոորդինատները) կախված են $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքի ընտրությունից: Տեսնենք, թե ինչպես են փոփոխվում $f(e_i)$ գործակիցները, երբ A^n-ի $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքից անցում է կատարվում նոր՝ $\{e_{i'}\}_{\overline{1,n}}$ հենքի: Տրված x պահանջմունքի դեպքում $f(x)$-ը հին $\{e_i\}_{\overline{1,n}}$ հենքում ներկայացվում էր $f(x) = f(e_i)x^i$ տեսքով: Նոր $\{e_{i'}\}_{\overline{1,n}}$ հենքում այն կներկայացվի $f(x) = f\left(x^{i'} e_{i'}\right) = x^{i'} f(e_{i'})$ տեսքով: Հետևաբար $f(e_i)x^i = f(e_{i'})x^{i'}$: Տեղադրելով (6)-ից այս հավասարության մեջ $x^i = \Gamma^i_{i'} x^{i'}$ արժեքները՝ կստանանք $f(e_i)\Gamma^i_{i'} x^{i'} = f(e_{i'})x^{i'}$, որտեղից

$$f(e_{i'}) = \Gamma^i_{i'} f(e_i): \tag{20}$$

Հանգունորեն կստանանք նաև, որ

$$f(e_i) = \Gamma_i^{i'} f(e_{i'}) : \tag{21}$$

Համեմատելով (20) և (21) բանաձևերը (5) և (6) բանաձևերի հետ դժվար չէ նկատել, որ $f(e_i)$-երից $f(e_{i'})$-երին անցումն իրականացվում է ոչ թե x^i-երից $x^{i'}$-երին անցման $(\Gamma_i^{i'})$ մատրիցի, այլ նրան հակադարձ $(\Gamma_{i'}^{i})$ մատրիցի միջոցով: Այսինքն՝ e_i հենքային վեկտորների ձևափոխության օրենքը համընկնում է $f(e_i)$-երի ձևափոխության օրենքի հետ և հակադարձ է x^i-երի ձևափոխության օրենքին: Այս հանգամանքը հաշվի առնելով է, որ մաթեմատիկական գրականության մեջ A^n տարածության վեկտորները $\widetilde{A}^n$ տարածության վեկտորներից տարբերելու համար վերջիններիս անվանում են նաև կովեկտորներ [24]:

Այսպիսով, f ֆունկցիան այնպիսի մի գծային ձև է, որը պահանջմունքի x և գնային λ վեկտորների յուրաքանչյուր զույգին՝ (7) կանոնով համապատասխանության մեջ է դնում սպառողի ծախսերի թվային արժեքը: Այն օժտված է հետևյալ չորս հատկություններով.

$$f(x+y) = f(x) + f(y), \quad f(\alpha x) = \alpha f(x), \quad (f_1 + f_2)(x) = f_1(x) + f_2(x),$$

$$(\alpha f)(x) = \alpha f(x) : \tag{22}$$

(7) բանաձևով որոշվող ծախսերի $f(x)$ ֆունկցիայի $x^i\lambda_i$ արժեքը կարելի է դիտարկել որպես $x = x^i e_i$ և $\lambda = \lambda_i f^i$ վեկտորների $\langle x, \lambda \rangle$ սկալյար արտադրյալ[9].

$$f(x) = x^i \lambda_i = \langle x, \lambda \rangle, \tag{23}$$

Օգտվելով (23) գրառումից՝ (22) արտահայտությունները ներկայացնենք

$$\langle x+y, \lambda \rangle = \langle x, \lambda \rangle + \langle y, \lambda \rangle, \quad \langle \alpha x, \lambda \rangle = \alpha \langle x, \lambda \rangle, \quad \langle x, \lambda^1 + \lambda^2 \rangle = \langle x, \lambda^1 \rangle + \langle x, \lambda^2 \rangle,$$

$$\langle x, \alpha\lambda \rangle = \alpha \langle x, \lambda \rangle, \tag{24}$$

[9] Նկատենք, որ ի տարբերություն սկալյար արտադրյալի դասական սահմանման, որտեղ այն միևնույն գծային տարածության վեկտորների զույգին վերագրված թիվ է, այստեղ այն վերագրվում է վեկտորների այնպիսի զույգի, որոնցից մեկը A^n, իսկ մյուսը՝ $\widetilde{A}^n$ տարածության վեկտոր է:

տեսքերով: Կարող ենք ասել, որ (23) բանաձևով A^n և $\widetilde{A}^n$ տարածությունների օբյեկտների միջև սահմանվում է գործողություն[10] (նշանակենք այն $\varphi(x, f)$), որն ամեն մի $x \in A^n$ վեկտորի և $f \in \widetilde{A}^n$ կովեկտորի համապատասխանեցնում է $\lambda^i x_i$ թիվը (ծախսերի չափը), և այդ գործողությունը բավարարում է (24) պայմաններին: $\varphi(x, f)$ գործողության միջոցով (23) և (24) առնչությունները գրառենք հետևյալ կերպ.

$$\begin{aligned}\phi(x+y, f) &= \langle x+y, \lambda\rangle = (x^i + y^i)\lambda_i = x^i\lambda_i + y^i\lambda_i = \\ &= \langle x, \lambda\rangle + \langle y, \lambda\rangle = \phi(x, f) + \phi(y, f)\end{aligned}, \quad (25)$$

$$\varphi(\alpha x, f) = \langle \alpha x, \lambda\rangle = (\alpha x^i)\lambda_i = \alpha(x^i\lambda_i) = \alpha\langle x, \lambda\rangle = \alpha\varphi(x, f), \quad (26)$$

$$\begin{aligned}\phi(x, f_1 + f_2) &= \langle x, f_1 + f_2\rangle = x^i(\lambda_i^1 + \lambda_i^2) = \\ &= x^i\lambda_i^1 + x^i\lambda_i^2 = \langle x, \lambda^1\rangle + \langle x, \lambda^2\rangle = \phi(x, f_1) + \phi(x, f_2)\end{aligned}, \quad (27)$$

$$\varphi(x, \alpha f) = \langle x, \alpha f\rangle = x^i(\alpha\lambda_i) = \alpha(x^i\lambda_i) = \alpha\langle x, \lambda\rangle = \alpha\varphi(x, f): \quad (28)$$

(25)-(28) բանաձևերից հետևում է, որ $\varphi(x, f) = \langle x, \lambda\rangle$ կանոնով սահմանվում է երկգծային ձև, որը x և f վեկտորների յուրաքանչյուր զույգին համապատասխանեցնում է $x^i\lambda_i$ թիվը: Հաստատուն գնային վեկտորի դեպքում[11] (երբ $\lambda = const$), φ երկգծային ձևի արժեքը պայմանավորվում է պահանջմունքի x վեկտորով, այսինքն՝ անհատական օգտագործման համար սպառողին անհրաժեշտ ապրանքների $x^1, x^2, \ldots, x^n$ քանակներով: Այդ դեպքում φ-ն վերածվում է մեկ վեկտորական արգումենտից գծային ձևի: φ-ն կվերածվի 1-գծային ձևի նաև այն դեպքում, երբ x պահանջմունքի վեկտորը հաստատուն է, իսկ գների վեկտորը՝ փոփոխական[12]:

$\varphi = \varphi(x, f)$ երկգծային ձևը ներկայացնենք հետևյալ տեսքով.

$$\varphi = \varphi(x, f) = \varphi(x^i e_i, \lambda_j f^j) = x^i\lambda_j\varphi(e_i, f^j) = \varphi_i^j x^i\lambda_j, \quad (j, k = \overrightarrow{1, n}), \quad (29)$$

[10] Սկալյար արտադրյալի գործողություն վեկտորների և կովեկտորների միջև:

[11] Այսինքն, երբ սպառողներն առևտուր են անում միևնույն վաճառակետից:

[12] Սա համարժեք է այն իրադրությանը, երբ իր ֆիքսված x պահանջմունքը բավարարելու համար անձն առևտուր է անում տարբեր վաճառակետերից, որոնցում միևնույն ապրանքը տարբեր գին ունի:

որտեղ $\varphi(e_i, f^j)$ թվերը նշանակված են φ_i^j-ով, որոնց կանվանենք երկգծային ձևի գործակիցներ: Պարզ է, որ φ_i^j գործակիցները կախված են A^n և $\widetilde{A}^n$ տարածությունների հենքերի ընտրությունից: Տեսնենք, թե ինչպես են փոփոխվում $\varphi = \varphi(x, f)$ երկգծային ձևի φ_i^j գործակիցները, երբ $\{e_i\}_{\overline{1,n}}$ և $\{f^i\}_{\overline{1,n}}$ հենքերից անցում է կատարվում $\{e_{i'}\}_{\overline{1,n}}$ և $\{f^{i'}\}_{\overline{1,n}}$ հենքերին: Նոր հենքերում φ երկգծային ձևը կներկայացվի

$$\varphi = \varphi(x, f) = \varphi(x^{i'}e_{i'}, \lambda_{j'} f^{j'}) = x^{i'}\lambda_{j'}\varphi(e_{i'}, f^{j'}) = \varphi_{i'}^{j'} x^{i'}\lambda_{j'} \qquad (30)$$

տեսքով: Սակայն, նոր հենքերի անցնելիս $e_{i'} = \Gamma_{i'}^i e_i$, $f^{j'} = \Gamma_j^{j'} f^j$, հետևաբար

$$\varphi_{i'}^{j'} = \varphi(e_{i'}, f^{j'}) = \varphi(\Gamma_{i'}^i e_i, \Gamma_j^{j'} f^j) = \Gamma_{i'}^i \Gamma_j^{j'} \varphi(e_i, f^j) = \Gamma_{i'}^i \Gamma_j^{j'} \varphi_i^j : \qquad (31)$$

Համոզվենք, որ φ երկգծային ձևն ինվարիանտ է (անփոփոխակ է), այսինքն՝ նրա արժեքը կախված է միայն x և f վեկտորներից և կախված չէ նրանից, թե որ $\{e_i\}_{\overline{1,n}}$ և $\{f^i\}_{\overline{1,n}}$ հենքերում են դիտարկվում այդ վեկտորները: Իրոք, հենքային ձևափոխության արդյունքում $\varphi = \varphi_i^j x^i \lambda_j$ երկգծային ձևը կփոխակերպվի $\varphi' = \varphi_{i'}^{j'} x^{i'} \lambda_{j'}$ երկգծային ձևի: Ցույց տանք, որ $\varphi = \varphi'$: Հաշվի առնելով, որ $\varphi_{i'}^{j'} = \Gamma_{i'}^i \Gamma_j^{j'} \varphi_i^j$, $x^{i'} = \Gamma_i^{i'} x^i$, $\lambda_{j'} = \Gamma_{j'}^m \lambda_m$[13], $\Gamma_{k'}^i \Gamma_j^{k'} = \delta_j^i$, $\Gamma_{j'}^k \Gamma_k^{i'} = \delta_{j'}^{i'}$, կարող ենք գրել

$$\varphi' = \varphi_{i'}^{j'} x^{i'} \lambda_{j'} = \Gamma_{i'}^i \Gamma_j^{j'} \varphi_i^j \Gamma_k^{i'} x^k \Gamma_{j'}^m \lambda_m = \Gamma_{i'}^i \Gamma_k^{i'} \Gamma_j^{j'} \Gamma_{j'}^m \varphi_i^j x^k \lambda_m =$$

$$\delta_k^i \delta_j^m \varphi_i^j x^k \lambda_m = \varphi_i^j \delta_k^i x^k \delta_j^m \lambda_m = \varphi_i^j x^i \lambda_m = \varphi :$$

φ երկգծային ձևի ինվարիանտությունը նշանակում է, որ φ_i^j գործակիցների համախմբությունն իրենից (1,1) տիպի տենզոր է ներկայացնում, այսինքն՝ դրանք հանդիսանում են A^n և $\widetilde{A}^n$ տարածությունների $A^n \otimes \widetilde{A}^n$ տենզորական արտադրյալի տարրեր: $A^n \otimes \widetilde{A}^n$ տարածությունն անվանենք *ապրանքագնային տարածություն:* Այսպիսով, ապրանքագնային տարածությունը կարելի է դիտարկել, որպես $A^n \otimes \widetilde{A}^n$ տենզորական տարածության մոդել:

---

[13] $\lambda_{j'} = \Gamma_{j'}^m \lambda_m$ բանաձևը հետևում է $f(e_{i'}) = \Gamma_{i'}^i f(e_i)$, $f(e_i) = \lambda_i$, $f(e_{i'}) = \lambda_{i'}$ կապերից (տե՛ս (15)-ը, (*)-ը և (20)-ը) :

